



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՆՈՅԵՄԲԵՐ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 51

### ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.  
 քու անասնան գաթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:  
 Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս, եւ իմ մեղքես զիս սրբէ:  
 Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չէլլեր:  
 Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր, գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:  
 ուստի արդար ես, ինչ վճիռ ալ արձակես. իրաւացի ես, ինչ պարիժ ալ սահմանես:  
 Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր, մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ:  
 Սակայն դուն, Տէր, որովհետեւ մարդուս սրտին մէջ ճշմարտութիւնը կ'ուզես տեսնել,  
 ծածուկ կերպով իմաստութիւնդ յայտնեցիր ինձի:  
 Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,  
 լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:  
 Յնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,  
 եւ քառապաճ ոսկորներս պիտի ցնծան:  
 Նկարի մի առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:  
 Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,  
 նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:  
 Ներկայութենէդ մի գրկեր զիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չքէ զիս:  
 Փրկութեանդ ցնծութիւնը քու ինձի,  
 եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:  
 Որպէսզի անօրէններուն տրվեցնեմ քու կամքդ, եւ մեղաւորները քեզի դառնան:  
 Այս արեան պարսքէն փրկէ զիս, Աստուած, Աստուած, փրկիչս,  
 եւ լեզուս ցնծութեամբ արդարութիւնդ պիտի երգէ:  
 Բաց իմ շրթներս, ով Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:  
 Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մաքուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուզեր:  
 Ուզած զոհդ զոյսմով լի հոգի մըն է, ով Աստուած,  
 հետեւաբար մի մերժեր զոյսմնալից եւ ընկճուած իմ սիրտս:  
 Բարեհաճ եղիր Միոնի հանդէպ, որպէսզի Երուսաղէմի պարիսպները վերաշինուին:  
 Այն արեւն պիտի ընդունիս քառութեան մեր զոհերը,  
 ուխտի նուէրներն ու ողջակէզները, եւ քու զոհասեղանիդ դրուած մաքողաշ ցուլերը:

### ՆԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:  
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղեղոց:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



**ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ**

Կը շարունակենք: ԶԱստուած ճանաչողութեան եւ ինքնաճանաչողութեան Սաղմոս է ըսինք, այս Սաղմոսը, ուր Դաւիթ կը ճանչնան զԱստուած իբրեւ ողորմած եւ անսահման գթութիւն, որուն հիման վրայ կը դիմէ իր մեղքերուն քաւութեան եւ թողութեան համար: Մեղքերու քաւութիւն եւ թողութիւն խնդրելու համար նախապայման է ինքնաճանաչումը, եւ առաւել՝ անհրաժեշտ է խոնարհութիւնը: Որովհետեւ յաճախ մեղքին հետ նաեւ կայ հպարտութեան բաժինը, ուր մարդ արարածը դժուար թէ ընդունի իր մեղաւորութիւնը: Դաւիթ կը խոստովանի ըսելով, «Գիտեմ, յանցանք գործեցի»: Ի՞նչ էր Դաւիթի յանցանքը: Սպաննութիւն, շնութիւն, մեղքը ծածկել՝ չխոստովանիլ, եւ մերժել ապաշխարելը: Յաճախ կը մոռնանք մեղքին վաարակիչ ըլլալու հանգամանքը, եւ այլ ուրիշ մեղքի առաջնորդելը: Օրինակ, երբ Ադամ մեղք գործեց, նախ ինչ էր Ադամի մեղքի, Աստուծոյ խօսքին նկատմամբ անվստահութիւն, Աստուծոյ խօսքին դրժումը: Որուն հետեւանքը արգիլուած պտուղին ճաշակումը: Սակայն Ադամին մեղքը այնպէղ կանգ չառաւ, այլ անոր յաջորդեց՝ խոստովանութեան մերժումը, եւ ապաշխարութեամբ վերադարձը: Տակաւին, շարունակութիւնը յաջորդ սերունդին վրայ, եղբայրսպաննութիւնը՝ Կայէն եւ Աբել: Երբ Դաւիթ կ'արտայայտու ըսելով, «Գիտեմ, մեղք գործեցի» կը նշանակէ որեւէ մէկ արդարացում չունի: Որովհետեւ մարդ արարածը միշտ ալ կը փորձէ ինքզին արդարացնել: Արիկա կու գայ Ադամին օրերէն. «Այն կինը որ դուն ինձի փութիր, անիկա փուսաւ որ ես ուրեմ», այսինքն՝ ով Աստուած դուն եթէ այդ կինը փուսած չըլլայիր, ես պպիտի չուրէի: Այսպէղ Աստուած ինք եղաւ կարծէք մեղաւորը: Նոյնն է նաեւ մեր պարագան, միշտ ալ կը փորձենք մեղմբ դուրս քեանելու եւ մենք զմեզ արդարացնելու: Բայց երբ կը խոստովանինք, «Գիտեմ» բացաբորութեամբ, այն պրեւն կը նշանակէ որեւէ մէկ արդարացում չունին: Ամբողջութեամբ մաքրէ, ոչ թէ միայն ջուրով, ոչ թէ միայն արտաքին, այլ՝ նաեւ մտքի մաքրութիւն, նկարագրի փոփոխութիւն: Կը նմանի խոզին, որքան ալ մաքրես, դարձեալ կ'երթայ դէպի ցեխը, որովհետեւ այդ իսկ է անոր նկարագիրը: Այսպէղ եւս, Դաւիթ կը խնդրէ որ Աստուած ամբողջութեամբ մաքրէ զինք: Այն օրէն սկսեան որ Դաւիթ մեղքը գործեց, այդ մեղքը մնայուն անոր առջեւն էր, միժշտ փորձեց այս կամ այն ձեւով ծածկել, չմտածել այդ մասին, մինչեւ հասաւ պահը, երբ Աստուած Նաթան մարգարէին միջոցաւ խօսեցաւ Դաւիթին, եւ հայելիի մը նման Դաւիթ ինքզինք քեաւաւ:

Դաւիթ կը խոստովանի եւ կ'անդրադառնայ, որ այն մեղքը որ գործեց, գործեց միայն Աստուծոյ դէմ: Այնպէս ինչպէս Յովսէփ գեղեցիկ երբ Պեպարբէսի կինը ուզեց Յովսէփի հետ կենակցիլ, Յովսէփ պարասխանեց ըսելով, «Տիրոջս դէմ մեղանչեմ» Ծննդոց 39:9: Այո, ինչ որ կ'ընենք ուրիշին, խորքին մէջ Աստուծոյ դէմ ըրած կ'ըլլանք: Քրիստոս պիտի ըսէ, «Ինչ որ ըրիք ուրիշին, ինձի ըրած եղաք»: Ուրեմն, պէտք է անդրադառնանք, որ որեւէ մեղք որ կը գործենք որեւէ մէկուն դէմ, խորքին մէջ Աստուծոյ դէմ գործած կ'ըլլանք, մանաւանդ՝ երբ Աստուած է որ այդ պարտիրանն է դրած, ուրեմն պարտիրանագանցութիւն կ'ըլլայ մեր ըրածը Աստուծոյ դէմ: Ահա այս անդրադարձումին, Դաւիթ կ'ընդունի այն ինչ որ Աստուած վճիռ պիտի արձակէ, որովհետեւ նախ արդարացի չէ որեւէ մէկ ձեւով Դաւիթը ըրածը, երկրորդ, Դաւիթ կը զիտակցի ու կը դաւանի, ու մանաւանդ՝ կը ճանչնայ զԱստուած որպէս Արդար եւ իրաւացի:

Դաւիթ կը ներկայացնէ, որ ինք՝ ծնունդէն սկսեալ անօրէն եւ մեղաւոր է: Սա ցոյց կու տայ Ադամական մեղք հասկացողութիւնը: Սա ըսելով, Դաւիթ ինքզինք չ'արդարացնէր: Այլ ցոյց կու տայ մեղքին խորութիւնը, անոր արմարները, որ կ'երթան մինչեւ Ադամ: Մեղքին ժառանգական ըլլալը: Հակառակ Ադամական մեղքին ու անոր խորութեան, Դաւիթ նաեւ կը ճանչնան զԱստուած, որպէս այնպիսին որ կ'ուզէ մարդուն սրտին մէջ ճշմարտութիւնը քեանել: Այնպէս չէ, որ մարդը մեղք գործեց, Աստուած ալ անտարբեր է մարդու վիճակին դիմաց: Ընդհակառակը, Աստուած կ'ուզէ, որ մարդը վերաքին վերադառնայ սկզբնական վիճակին եւ դուրս գայ անկեալ վիճակէն: Եւ ի՞նչն է որ Աստուած ծածկու կերպով իմաստութիւնը յայտնեց: Թէ ինչպէս Աստուած կրնայ ներում շնորհել: Այն ինչ որ մարդուն համար կրնայ անկարելի թուիլ, սակայն Աստուծոյ համար անկարելի չէ: Օրինակ, երբ Աստուած պարտիրեց Յովնան մարգարէին երթալու Նինուէ եւ անոնց քարոզելու եւ ապաշխարութեան հրաւիրելու, Յովնան մարգարէն ոչ թէ միայն չգնաց, այլ նաեւ սկսաւ կասկածիլ, որ Աստուած կրնայ անոնց մեղքը ներել: Ահա հոս իսկ է Աստուծոյ իմաստութիւնը, որուն մասին կ'ակնարկէ Դաւիթ: Աստուած ինք է որ կը հարուածէ, եւ կը բժշկէ: Ի՞նչն է որ կը հարուածէ, մեղքը, չարիքը, եւ կը բժշկէ մեղքին պարճառած վերքը: Այս բոլորը հասկնալու համար իմաստութիւն է պէտք: Եւ այդ իմաստութիւնը Աստուած յայտնեց երբ աշխարհ զրկեց Իր Միածին Որդին, մեր Տէրն ու փրկիչ Յիսուս Քրիստոսը: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ, Աստուծոյ իմաստութիւնը եւ Աստուծոյ գորութիւնը Խաչը, որ մենք կը քարոզենք: